Արձանագրություն N 3

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ վիրուսային հեպատիտի բուժման դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/11» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» «Նոյեմբերի» 2022թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.10.22թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 14:00-ին: 2022 թվականի հոկտեմբերի 20-ին ժամը 14:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216
2	«Վիոլետտա Ֆարմ» ՍՊԸ	violetapharm@violetaclinic.com	01044241

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

2022 թվականի հոկտեմբերի 20-ին կայացած նիստի ժամանակ որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մասով առաջարկվել է շտկել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը հավելված 1.1՝ տեխնիկական բնութագիրը՝ ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը, ինչպես նաև ներկայացնել չգրանցված դեղերի մասով Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը:

Որոշվել է գնահատումը հետաձգել մինչև ծանուցված մասնակցի կողմից սահմանված պատշաճ կարգով անհրաժեշտ տեղեկատվությունը (շտկված տեխնիկական բնութագիրը և պահանջվող տեղեկանքը) էլեկտրոնային աճուրդ համակարգում ներկայացնելը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

20.10.2022թ. հայտի գնահատումը կասեցվել էր՝ «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջիններս շտկելու նպատակով:

21.10.2022թ. գնման ընթացակրգի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պահանջված տեղեկանքը, սակայն տեղեկանում նշված է եղել, որ մասնակցի կողմից ներկայացված ապրանքը ընդգրկված չէ ԱՀԿ նախաորակավորված դեղերի ցանկում և գրանցված չէ ԱյՍիԷյչ (ICH) անդամ երկրներում, սակայն գտնվում է Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ում գրանցման փորձաքննության ընթացքում և գրանցվելուն պես կներկայացվի համապատասխան փաստաթղթերը:

24.10.2022թ. դրությամբ արդեն իսկ հասանելի է եղել էլեկտրոնային աճուրդ համակարգում՝ ծանուցված մասնակցի կողմից ներբեռնված պահանջվող շտկված տեխնիկական բնութագիրը:

10.11.2022թ. գնահատման համար հրավերով սահմանված ժամկետի ավարտվելուց առաջ գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին ներկայացվել է հարցում վերոգրյալ դեղի գրանցման գործընթացի վերաբերյալ, որին ի պատասխան վերջինս տեղեկացրել է, որ գրանցման եզրակացությունը կներկայացվի

սահմանված կարգով՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 16.11.2022թ.-ին ներկայացվել է դեղի գրանցման եզրակացությունը, որից հետո 2022 թվականի նոյեմբերի 17-ին տրվել է Առողջապահության նախարարի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» թիվ 5349-Ա հրամանը՝ որի հավելվածում ընդգրկված ցանկում ներառված է նաև «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված «Սոֆոսբուվիր/վելպատասվիր 400մգ/100մգ» «Վելպանատ» դեղը:

Որոշվեց. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Վ. Հակոբյան)

19.10.2022թ. կայացած հակադարձ աճուրդից հետո մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Վ. Հակոբյան)

Հրավերի վերաբերյալ 05.10.2022թ. ստացվել է հարցում և դրա վերաբերյալ 06.10.2022թ. տրամադրվել է պարզաբանում էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով::

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/11» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ-ի 109,200,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը:

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/11» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 22.11.2022թ.-ից մինչև 01.12.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք հեպատիտ C բուժման դեղերի
վերաբերյալ վերջնական գներով

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Վիոլետա Ֆարմ» ՍՊԸ									
					նախնական առաջարկ					վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ի	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ի	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Սոֆոսբուվիր/վելպատասվիր 400մգ/100մգ	151,200	1,099.00	166,168,800.00	132,300,000	26,460,000	158,760,000	875.00	1,050.00	91,000,000	18,200,000	109,200,000	601.85	722.22

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք հեպատիտ C բուժման դեղերի
վերաբերյալ վերջնական գներով

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ									
					նախնական առաջարկ					վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ի	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ի	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Սոֆոսբուվիր/վելպատասվիր 400մգ/100մգ	151,200	1,099.00	166,168,800.00	138,464,000	27,692,800	166,156,800	915.77	1,098.92	117,677,000	23,535,400	141,212,400	778.29	933.94